



Կորոնավիրուսային Հիվանդություն 2019 Թեստավորում

Փաստաթուղթն ուրիշ լեզուներով և այլ ձևաչափով տեսնելու համար այցելեք՝ ph.lacounty.gov/acd/ncorona2019/covidtests

ՊԱՇՏՊԱՆԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ

- COVID-19-ով վարակված անձինք՝ անգամ եթե ախտանիշներ չունեն, կարող են չափազանց վարակակիր լինել և փոխանցել վարակը մյուսներին:
- Որևէ թեստ անթերի չէ, անգամ, եթե ձեր թեստը բացասական է, շատ կարևոր է որոշ քայլեր ձեռնարկել՝ նվազեցնելու COVID-19-ի և այլ վարակիչ հիվանդությունների տարածումը:
- Եթե դուք ունեք հազով կամ շնչարգելությամբ ուղեկցվող ջերմություն, կամ ձեր բժիշկը կարծում է, որ վարակված եք COVID-19-ով, ապա պետք է մեկուսանաք (առանձնանաք մյուսներից) և ձեզ հետ սերտ շփում ունեցած անձինք պետք է կարանտին պահպանեն: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք lacounty.gov/covidisolation:
- Եթե դուք [սերտ շփում](#) եք ունեցել COVID-19-ով վարակված կամ կասկածվող վարակված անձի հետ, ապա պետք է ինքնամեկուսանաք (մնաք տանը՝ առանձնանաք մյուսներից <<սպասելու և տեսնելու համար>>՝ արդյոք ձեզ մոտ *հիվանդությունը* զարգանում է, թե ոչ)՝ *անգամ եթե ձեր թեստի պատասխանը բացասական լինի*: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://ph.lacounty.gov/covidquarantine>:
- COVID-19-ի ռիսկը նվազեցնելու լավագույն տարբերակն է [կատարել ամենօրյա կանխարգելիչ գործողություններ](#)՝ ներառյալ հեռավորություն պահպանել մյուսներից, ճիշտ կերպով կրել դեմքի կտորե ծածկոցը, որը փակում է ձեր քիթը և բերանը և հաճախ լվանալ ձեր ձեռքերը: Կատարեք խելացի ընտրություն և խուսափեք [3 C-ից](#) (սահմանափակ տարածքներից, մարդաշատ վայրերից և սերտ շփումներից):

ՆԵՐԿԱՅԻՍ COVID-19 ՎԱՐԱԿԻ ՀԱՄԱՐ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Ախտորոշիչ (Վիրուսային) Թեստավորում – Մոլեկուլային և Հակագեն Թեստեր

Որ Թեստերն են Խորհուրդ Տրվում Ներկայիս Վարակի Վեր Հանման Համար

- Ներկայիս վարակի հայտնաբերման համար խորհուրդ է տրվում կատարել մոլեկուլային թեստավորում, քանի որ COVID-19-ի պատճառ հանդիսացող վիրուսի հայտնաբերման գործում դա ավելի արդյունավետ է, քան հակագեն թեստավորումը:
- Հակագեն թեստերն ավելի արագ են կատարվում, քան մոլեկուլային թեստերից շատերը, բայց դրանք ավելի արդյունավետ չեն և չեն բացահայտում ավելի շատ վարակներ: Այդ պատճառով, եթե ձեր հակագեն թեստի պատասխանը բացասական է, դուք պետք է կրկին թեստավորվեք մոլեկուլային թեստի միջոցով՝ հատկապես, եթե COVID-19-ի ախտանիշներ ունեք:
- Ներկայիս վարակի հայտնաբերման համար խորհուրդ չեն տրվում սերոլոգիական թեստերը:
- Հարցրեք ձեր բժշկին՝ ինչ թեստեր են նրանք օգտագործում:

Երբ է Խորհուրդ Տրվում Թեստ Հանձնել

Թեստավորումն առավելագույնս խորհուրդ է տրվում

- **Ախտանիշներ Ունեցող անձանց.** Եթե ունեք COVID-19-ի [ախտանիշներ](#), ապա կապ հաստատեք բժշկի հետ և քննարկեք՝ արդյոք պետք է թեստավորվեք, թե ոչ:
- **Ախտանիշներ Չունեցող Անձանց, ովքեր՝**
- **վերջին 14 օրերի ընթացքում <<սերտ շփում >> են ունեցել անձի հետ, ում մոտ հաստատվել է COVID-19-ը կամ COVID-19-ի (դեպքի) կասկածներ կան:** Անգամ եթե ձեր թեստի պատասխանը բացասական է, դուք պետք է շարունակեք տանը մնալ և ավարտել ձեր կարանտինը:
- **Արդյո՞ք վարակին արձագանքման հաստատությունները կամ շփումները բարձր ռիսկային գոտում են,**՝ ինչպիսիք են՝ ծերանոցները, ուղղիչ հաստատությունները կամ անօթևանները:

Թեստավորում խորհուրդ չի տրվում այն անձանց, որոնց COVID-19-ի վիրուսային թեստի պատասխանը դրական է եղել վերջին երեք ամիսների ընթացքում, եթե նրանց [մեկուսացման շրջանն](#) արդեն ավարտվել է և եթե ներկայումս նրանք COVID-19-ի ախտանիշներ չունեն:

COVID-19-ի ԹԵՍԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

	ԱՆՏՈՐՈՇԻՉ (ՎԻՐՈՒՄԱՅԻՆ) ԹԵՍԱՎՈՐՈՒՄ Ցույց Ե տալիս ներկայիս վարակը		ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԹԵՍԱՎՈՐՈՒՄ Ցույց Ե տալիս նախկին վարակը
Նաև հայտնի որպես	Մոլեկուլային Թեստ <ul style="list-style-type: none"> Ախտորոշիչ թեստ Նուկլեինաթթվի ուժեղացման թեստ (NAAT) Հակադարձ-Տառադարձման Պոլիմերազային Շղթայական Ռեակցիա (RT-PCR կամ PCR) 	Հակագեն Թեստ <ul style="list-style-type: none"> Արագ ախտորոշիչ թեստ 	Հակամարմինների Թեստ <ul style="list-style-type: none"> Սերոլոգիա Սերոլոգիական թեստ Արյան անալիզի թեստ
Որ դեպքում է խորհուրդ տրվում թեստավորումը	<ul style="list-style-type: none"> COVID-19-ի ախտանիշներ ունեցող մարդկանց COVID-19-ով վարակված անձի հետ սերտ շփում ունեցած մարդկանց Ախտանիշներ չունեցող մարդկանց, որոնք ապրում/աշխատում բարձր ռիսկային վայրերում, որոնք վարակի հայտնաբերման և արձագանքման մաս են կազմում 	<ul style="list-style-type: none"> COVID-19-ի ախտանիշներ ունեցող մարդկանց 	<ul style="list-style-type: none"> Խորհուրդ է տրվում միայն որոշակի իրավիճակների համար: Տե՛ս << սերոլոգիայի կիրառությունները>>: ՈՉ ներկայիս վարակի ախտորոշման համար ՈՉ նրա համար, որպեսզի ցույց տա, որ անձը վարակված չէ COVID-19-ով:
Ինչ է հայտնաբերում թեստը	Հայտնաբերում է COVID-19-ի վիրուսի գենետիկական նյութը	Հայտնաբերում է COVID-19-ի վիրուսի մակերեսի սպիտակուլները	Հայտնաբերում է մարմնի իմունային համակարգի կողմից COVID-19-ի վարակին ի պատասխան ստեղծված հակամարմինները: Անձի վարակվելուց հետո 1-3 շաբաթ է պահանջվում թեստի միջոցով հակամարմինները հայտնաբերելու համար:
Նմուշի տեսակը	Զթից կամ կոկորդից ձողով վերցրած քսուք կամ թուք	Զթից կամ կոկորդից ձողով վերցրած քսուք	Արյան Անալիզ (մատից կամ երակից)
Որքան ժամանակ է պահանջվում թեստի արդյունքը ստանալու համար	Որպես կանոն՝ 2-ից 6 օր, բայց որոշ տեղանքներ առաջարկում են միևնույն օրը կամ անգամ մեկ-երկու ժամից	Մեկ ժամ կամ ավելի քիչ	Նույն օրվանից մինչև 3 օր
Ինչ է բացահայտում թեստը	Ստուգում է կորոնավիրուսի ակտիվ վարակի առկայությունը	Ստուգում է կորոնավիրուսի ակտիվ վարակի առկայությունը	Ստուգում է կորոնավիրուսի ակտիվ վարակի առկայությունը
Ինչ է նշանակում դրական արդյունքը/պատասխանը*	Դրական արդյունքը նշանակում է, որ դուք վարակված եք COVID-19-ով: Թեստը հայտնաբերել է COVID-19-ի վիրուսը: ԾԱՆՈՒՑՈՒՄ: Եթե COVID-19-ից ապաքինվելուց հետո 3 ամսվա ընթացքում դուք կրկին թեստավորվում եք, ապա ձեր թեստը դեռևս կարող է դրական լինել: Սա այն պատճառով է, որ թեստը կարող է հայտնաբերել հակամարմիններ մահացած վիրուսից: Խոսք է թշվի հետ:	Դրական արդյունքը նշանակում է, որ դուք վարակված եք COVID-19-ով: Թեստը հայտնաբերել է COVID-19-ի վիրուսը:	Դրական արդյունքը նշանակում է, որ նախկինում դուք վարակված եք COVID-19-ով: Թեստը հայտնաբերել է COVID-19-ի վիրուսի հակամարմինները:

	ԱՆՏՈՐՈՇԻՉ (ՎԻՐՈՒՍԱՅԻՆ) ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ Ցույց է տալիս ներկայիս վարակը	ՀԱԿԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ Ցույց է տալիս նախկին վարակը
<p>Ինչ է նշանակում բացասական արդյունքը/ պատասխանը*</p>	<p>Բացասական արդյունքը նշանակում է, որ թեստը չի հայտնաբերել վիրուսն այն ժամանակ, երբ կատարվել է թեստավորումը:</p> <p>Բացասական արդյունք կարող է լինել նաև այն դեպքում, եթե թեստավորումն իրականացվել է բավականին վաղ փուլում, կամ թեստը չի հայտնաբերել ձեր վարակը:</p> <p>Ծանուցում՝ եթե դուք սերտ շփում եք ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, ապա պետք է մնաք կարանտինում ամբողջ 14-օրյա ժամանակաշրջանում, քանի որ ձեզ մոտ դեռևս կարող է զարգանալ հիվանդությունը և դրական պատասխանի համար (եթե վարակված եք) չափազանց շուտ է կատարվել ձեր թեստավորումը:</p>	<p>Բացասական արդյունքը նշանակում է, որ թեստը չի հայտնաբերել COVID-19-ի վիրուսի հակամարմիններ և հնարավոր է՝ դուք երբևէ վարակված չեք եղել COVID-19-ով (ստորև տե՛ս հակամարմինների բաժինը):</p>

* COVID-19-ի որևէ թեստ անթերի չէ: Ցանկացած թեստ կարող է ցույց տալ՝

- Կեղծ բացասական արդյունք՝
 - Սա նշանակում է, որ թեստի արդյունքը պետք է դրական լինի, քանի որ դուք վարակված եք COVID-19-ով, բայց փոխարենը դրա արդյունքը կրկին բացասական է:
 - Սա կարող է պատահել, օրինակ, եթե նմուշները պատշաճ կերպով չեն հավաքագրվել, թեստը բավականին շուտ է կատարվել, կամ թեստը լավ չի կատարվել:
- Կեղծ դրական արդյունք՝
 - Սա նշանակում է, որ թեստի արդյունքը պետք է բացասական լինի, քանի որ դուք վարակված ՉԵՔ COVID-19-ով, բայց փոխարենը դրա արդյունքը դրական է:
 - Սա կարող է պատահել, օրինակ, եթե թեստավորվող անձը հավանաբար վարակված չէ, կամ թեստը լավ չի կատարվել:

Ինչպես Թեստ Հանձնել

- Չանգահարեք ձեր բժշկին: Եթե ձեզ օգնություն անհրաժեշտ լինի բժիշկ գտնելու հարցում, ապա զանգահարեք 2-1-1 հեռախոսահամարով կամ այցելեք [211LA](#):
- Մարդիկ, ովքեր բնակվում են Լոս Անջելեսի Շրջանում, *անկախ իրենց ներգաղթի կարգավիճակից*, կարող են դիմել՝ պայմանավորվածություն ձեռք բերելու մեքենայով մոտենալու կամ քայլելով մոտենալու և թեստ հանձնելու համար՝ այցելելով lacounty.gov/testing կամ զանգահարելով 2-1-1:
- Կարող եք նաև թեստ հանձնել որոշ դեղատներում: Հարցրեք ձեր տեղային դեղատանը:
- Չգուշացեք COVID-19-ի թեստավորման խարդախություններից: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք մեր [COVID-19 -ի խաբեությունների և խարդախությունների էջը](#):

COVID-19-ի Ախտորոշման Թեստի Վճարը

- Առողջապահական ապահովագրական ընկերություններից պահանջվում է (դաշնային օրենքով) վճարել վիրուսի ախտորոշման թեստի ամբողջ ծախսը՝ անկախ այն բանից՝ դուք ախտահարված եք, թե ոչ: Թեստը պետք է պատվիրի բժիշկը:
- Լոս Անջելեսի շրջանի, ինչպես նաև Լոս Անջելես քաղաքի բջջային կայքերի միջոցով կատարվող թեստավորումն անվճար է Լոս Անջելեսի շրջանի բոլոր բնակիչների համար, որոնք համապատասխանում են թեստավորման չափանիշներին՝ անկախ ներգաղթի կարգավիճակից:

Թեստավորումից Առաջ Տրվող Հարցեր

- Ինչ տեսակի թեստավորում են ձեզ առաջարկում (տե՛ս [աղյուսակը](#)):
- Որքան ժամանակ կպահանջվի թեստի արդյունքը ստանալու համար:
- Ինչպես պետք է իմանալ արդյունքների մասին
- Ինչ նախագգուշական միջոցառումներ պետք է ձեռնարկեք մինչդեռ սպասում եք թեստի արդյունքներին, և ինչ պետք է անեք թեստի դրական կամ բացասական պատասխանի դեպքում
- Թեստից հետո վստահ եղեք, որ հասկանում եք՝ ինչ է նշանակում ձեր թեստի պատասխանը:

ՆԱԽԿԻՆ COVID-19-Ի ԹԵՏՏԱՎՈՐՈՒՄ: ՀԱՎԱՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԹԵՏՏԱՎՈՐՈՒՄ (Սերոլոգիա)

Հակամարմինների թեստերը (նաև հայտնի որպես սերոլոգիական թեստեր) արյան անալիզի թեստեր են, որոնք փնտրում են վիրուսի հակամարմիններին: Նրանք ուղղված չեն հենց վիրուսի հայտնաբերմանը: Հակամարմինները իմունային համակարգի կողմից ստեղծված սպիտակուցներ են, որոնք օգնում են պայքարել վարակի դեմ: COVID-19-ի ախտահարողների ի հայտ գալու օրվանից հետո մարմնի համար մոտավորապես մեկից երեք շաբաթ է պահանջվում բավարար քանակով հակամարմիններ ստեղծելու համար, որոնց հնարավոր կլինի հայտնաբերել թեստի միջոցով: Որոշ մարդկանցից կարող է ավելի երկար ժամանակ պահանջվել հակամարմինների ստեղծման համար, իսկ որոշ մարդկանց մոտ COVID-19-ով վարակվելուց հետո, հնարավոր է, երբեք հակամարմիններ չարտադրվեն:

Մենք դեռևս չգիտենք՝ արդյոք վիրուսի հակամարմիններ ունենալը կարող է որևէ մեկին պաշտպանել կրկին վարակվելուց, և եթե այն պաշտպանի, ապա որքան կարող է շարունակվել այդ պաշտպանությունը (իմունիտետ):

Մինչև ավելի իմանալը, անգամ եթե ձեր հակամարմինների թեստը դրական է, դուք պետք է շարունակեք կատարել [ամենօրյա կանխարգելիչ գործողություններ՝ ձեզ և մյուսներին պաշտպանելու համար](#)՝ ներառյալ հեռավորություն պահպանել մյուսներից, ճիշտ կերպով կրել դեմքի կտորե ծածկոց, որը փակում է ձեր քիթը և բերանը և հաճախ լվանալ ձեր ձեռքերը: Շարունակեք կատարել խելացի ընտրություն և խուսափեք [3 C-ից](#) (սահմանափակ տարածքներից, մարդաշատ վայրերից և սերտ շփումներից):

Հակամարմինների թեստի պատասխանը չպետք է օգտագործվի որոշելու համար՝ արդյոք անձը կարող է վերադառնալ աշխատանքի, կամ՝ ովքեր կարող են միասին ժամանակ անցկացնել:

Նախկին վարակի հայտնաբերման համար անցկացվող հակամարմինների թեստի վերաբերյալ ավելին իմանալու համար այցելեք [CDC վեբ կայք](#):

Հակամարմինների թեստերի կիրառությունը

Ուղղորդել բուժման բարդ ախտահարողներ ունեցող անձին

Կան իրավիճակներ, երբ սերոլոգիական թեստը կարող է օգտակար լինել (ի հավելումն վիրուսային թեստին) COVID-19-ի ախտորոշման համար, ինչպես օրինակ՝

- Եթե հիվանդության վերջին փուլում անձի մոտ զարգանում են բարդացումներ, որոնք կարող են կապված լինել COVID-19-ի հետ, օրինակ՝ [բազմահամակարգային բորբոքային համախտանիշը երեխաների մոտ](#) (MIS-C):

- Եթե անձն ունի COVID-19-ի ախտանիշներ մի քանի շաբաթ շարունակ, և վիրուսային թեստը բացասական է:

COVID-19-ի բուժման համար գտնել արյան դոնորներ

Սերոլոգիական թեստերը կարող են օգտագործվել նախկինում COVID-19-ով վարակված անձանց հայտնաբերելու համար: Նրանք կարող են իրենց արյունը նվիրաբերել, որը կարող է օգտագործվել COVID-19-ով վարակված հիվանդներին բուժելու համար:

Գիտության և հանրային առողջապահության համար

Գիտնականները և Հանրային Առողջապահության կազմակերպությունները օգտագործում են հակամարմինների թեստերը պարզելու համար՝ ինչպես է ժամանակի ընթացքում իմունային համակարգը արձագանքում COVID-19-ի վիրուսին: Հակամարմինների թեստերը կարող են հայտնել այն մասին, թե համայնքում քանի մարդ է նախկինում վարակված եղել և՛ որքան է զարգացել համավարակը: Դրանք կարող են օգտագործվել նաև հասկանալու համար, թե ինչու որոշ մարդիկ վարակվել են, բայց նրանց մոտ երբևէ ախտանիշներ չեն դրսևորվել (ասիմպտոմատիկ/առանց ախտանիշների վարակ):

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- CDC COVID-19-ի Թեստավորում [վեբկայքը](#)՝ հղումներով դեպի թեստերի տեսակների Էջեր և ՀՏՀ-երը:
- FDA Կորոնավիրուսի Հիմքերը՝ Բացատրում է թեստերի տարբեր տեսակները, և՛ ինչպես են դրանք կատարվում և հաստատվում: [PDF վեբ կաք](#)
- COVID-19-ի Թեստի Արդյունքների Մեկնաբանման Սպիտակ Տան/DHHS Ուղեցույցը. [մեկ էջից քաղկացած արդյունակ](#) այն մասին՝ ինչպես մեկնաբանել թեստի արդյունքները (ներառյալ թեստերի համադրության դեպքում) և՛ ինչ գործողություններ իրականացնել արդյունքներին համապատասխան:
- [LAC DPH COVID-19 Ուղեցույցը՝ հիմնված \[մոլեկուլային\] Թեստի Արդյունքների վրա \(Անգլերեն \)](#)
- [LAC DPH COVID-19 Սերոլոգիական \[Հակամարմիններ\] Թեստի ՀՏՀ-երը՝ \(Անգլերեն \)](#)